Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԵՅI պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 -31.12.2025թթ |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025-31.06.2025թթ. |
| Ներկայացման օր | 07.07.2025թ |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը**:

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 83 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 7 դեպքի վարում (վերափաստագրում, բանկային գործարք ), 4 շահառուի համար ամենամսյա ընտանիքի անապահովության միավորի տեղեկանքի ստացում ՄՍՏ-ից, 20 ուղղորդում. միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում գործել են տարբեր հետաքրքրությունների խմբակներ, կազմակերպվել միջոցառումներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոններում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 10 խմբակ, որոնց մասնակցել են 83 շահառու:
    - Կրական խմբակ
    - Երգի խմբակ,
    - Կինեզալոգիայի խմբակ,
    - Հմուտ ձեռքեր,
    - Կարի,
    - Հոգևոր զրույցներ,
    - Առողջ ապրելակերպ,
    - Աշուղական խմբակ,
    - Ազգային երգ ու պար
    - «Անգլերեն»

Կազմակերպվել է թվով 75 մշակութային միջոցառում, որոնցից 19 կենտրոններում 45 կենտրոններից դուրս, որոնց մասնակցել է 83 շահառու:

Իրականացված միջոցառումներն են՝

1. Մայրության տոնին նվիրված միջոցառում

2. Սուրբ Զատկի տոնը նշում՝ տոնին բնորոշ արարողությամբ. տոնական միջոցառումով, երգուպարով
3. Հաղթանակի օրվա հիշատակում, անդրադարձ կատարվեց հայ ազգի նվիրյալներին ու բոլոր ժամանակների հերոսներին,
4. Հանրապետության հռչակման տոնին նվիրված զեկույց, որի ժամանակ անդրադարձ եղավ Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի և Սարդարապատի հերոսամարտին, հայերի կատարած մեծ աշխատանքին և Համրապետության հռչակման կարևորությանը:
5. Հայ Առաքելական եկեղեցու շարժական տոներից՝ Համբարձման տոնը՝ պահպանելով տոնին բնորոշ բոլոր ավանդույթները, ծեսերը, գեղեցիկ զարդարանքը ու տոնին բնորոշ ուտեստները մատուցելով. տոնի գլխավոր արարողությունը վիճակ հանելու ծեսն է, որը այս տարի էլ իրականացվեց՝ բոլորին պարգևելով մեծ ուրախություն:
6. Հանդիպում ԱՄՆ-ից ժամանած կամավորի հետ, ով ավագ սերնդի հետ կիսվեց իր փորձառությամբ. շահառուներն էլ իրենց հերթին կատարեցին ազգային երգ ու պար, ներկայացրին մեր կենտրոնի ծրագրերը:
7. Նկարահանում ավագ սերնդի ներկայացուցիչների մասնակցությամբ «Առավոտ Լուսո» հաղորդաշարի շրանակներում
8. «Նունեի Ցերեկային կենտրոնում» ավագ սերնդի ներկայացուցիչներին մատուցվել են վարսահարդարման ծառայություններ «Ալլա Բարսեղյան»-ի վարսահարդարման թիմի շնորհիվ
9. Այց «Բնության թանգարան», որի ժամանակ ավագ սերնդի ներկայացուցիչները հնարավորություն ունեցան տեսնելու Գոհար Հարությունյանի նկարների ցուցադրությունը, ինչպես նաև բնության թանգարանում առկա Հայաստանում կարևոր ցուցանմուշներ:
10. Այց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ. «Ոգեկոչման» երթ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և հարգանքի տուրքի մատուցում «Մեծ եղեռն»-ի զոհերի հիշատակին:
11. Էքսկուրսիա դեպի Գյումրի, որի ընթացքում այցելեցին Հովհաննես Շիրազի, Մհեր Մկրտչյանի, «Սև ու սպիտակ» թանգարաններ և Յոթ Վերք եկեղեցի:
12. Էքսկուրսիա «Ոսկեվազի» գինու գործարան, «Սաղմոսավանք», «Նոր Ջրաղաց» ռեստորանային համալիր:
13. էքսկուրսիա ք. Էջմիածին՝ «Սուրբ Հռիփսիմե» եկեղեցի և Մայր Տաճար:

Մասնակցություն համերգներին

1. Արամ Խաչատրյան» համերգասրահում. Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական կամերային նվագախմբի, Հեռուստատեսության և ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի, Ղազախստանի մշակութային օրերը Հայաստանում՝ Ղազախական պարի համույթի, Ա. Խաչատրյանի անվան 21-րդ միջազգային Դիրիժորների մրցույթներ համերգներին,
2.Կամերային երաժշտության տուն. Հայաստանի պետական կամերային նվագախմբի, Հայաստանի պետական կամերային երգչախմբի, «Տաղարան» հնագույն երաժշտության համույթի, Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում Հայկ Մելքյանի և Անուշ Նիկողոսյանի երգեհոնային երաժշտության շաբաթօրյա համերգներին և Կանանց մեկամսյակին նվիրված գրական երաժշտական երեկոյին,
3. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Պարի պետական համույթի համերգին,
4. ԱՌՍՄՈ –ի այգում Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի և Երևանի Սպենդիարիայի անվան օպերայի և բալետի ազգայի ակադեմիական թատրոնի բացօթյա ներկայացումներին,
5. Մոսկվա կինոթատրոնում Ղազախական կինոյի փառատոնին,
6. Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնում՝ ազգային նվագարանների անսամբլի համերգին,
7. Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում Համլետ և Ախ Աննա Աննա ներկայացումներին:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 44 խմբային հանդիպում (մասնակիցների թիվ՝ 61) և 4 շահառուի հետ անհատական շարունական աշխատանք՝ ուղղված անձնային աճին, կենսական ակտիվ ինքնորոշման խթանմանը, հոգեկան ոլորտների ակտիվացմանը, գիտելիքների ձեռքբերմանը: Իրականացվել են նաեւ անցած կենսափորձի վերարժեւորմանն ուղղված, արժեքային համակարգի քննարկմանը եւ խմբային արժեքների դուրսբերմանն ուղղված, խմբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավմանն ու միախմբմանն ուղղված տեխնիկաներ, ինչպես նաեւ իրականացվել է երաժշտաթերապիա, ուշադրության, հիշողության զարգացմանը նպաստող խաղեր, վերբալ եւ պատկերավոր մտածողությանը, ստեղծագործական երեւակայության հետազոտմանը եւ զարգացմանն ուղղված տեխնիկաներ, ինչպես նաև ինքնաճանաչման ուղղված պրոյեկտիվ մեթոդիկաներ:
- Սննդի կազմակերպման շրջանակներում կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Բաղնիքի ծառայության տրամադրում շրջանակներում թվով 2 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից. 2 շահառու օգտվել է լվացքի ծառայությունից:
- Այլ ծառայությունների տրամադրման Բուժքույր կողմից ցերեկային կենտրոնում իրականացվել է թվով 73 շահառուի զարկերակային ճնշման չափում. 73 օքսիմետրիա. 2 ւ շահառուի համար իրականացվել է տունայց, 1 շահառու համար դեղորայքի ստացում. 9 շահառուի գլյուկոմետրիա. 2 շահառուի ներերկում: Հիգիենայի կանոնների վերահսկում, սննդի ստուգում և շաբաթական մեկօրյա գրաֆիկով առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացի կազմակերպում՝ «Այցելուների հիվանդությու, առաջացման պատճառները», «Տրոմբոզների առաջացումը բուժումը» «Ողնաշարի ծռվածություն», «Հիպերտոնիկ հիվանդություն կաթված» ,«Արտրիտներ, պատճառներ և բուժում» թեմաներով քննարկումներ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը

- Անգլերենի ուսուցում (https://surl.lu/fwcygd տե՛ս հետեւյալ հղմամբ՝)
- Կանանց նվիրված միամսյակի տոնական միջոցառում՝ ազգային երգուպար (https://surl.li/zyelug տե՛ս հետեւյալ հղմամբ՝)
- Սուրբ Զատկի տոն (https://surl.lu/jncplw տե՛ս հետեւյալ հղմամբ՝)
- Հոգեբանի հետ հանդիպում (https://surli.cc/fuwehj տե՛ս հետեւյալ հղմամբ՝)
- Կոհար (https://surl.lt/zzpzgj տե՛ս հետեւյալ հղմամբ ՝ )
- Նոր Նորքի և Ավան ցերեկային կենտրոնի ավագ սերնդի ներկայացուցիչները և համայնքում բնակվող արցախցիները միասին ճանաչողական այց կատարեցին քաղաք Գյումրի (https://surli.cc/cuclgw տե՛ս հետեւյալ հղմամբ)
- Հայ Առաքելական եկեղեցու տոներից Համբարձման տոնը (https://surl.lu/nbkknf տե՛ս հետեւյալ հղմամբ՝)
- Կենտրոնում Ապրիլի 7-ի տոնակատարությունը տե՛ս հետեւյալ հղմամբ՝;https://surl.lu/bcbqre
- Ավան ցերեկային կենտրոնի շահառուները յուրովի են անդրադարձել Սուրբ Զատիկի տոնակատարությանը տե՛ս հետեւյալ հղմամբ՝;https://surl.li/evbvra
- Միջոցառում նվիրված Հիսուս Քրիստոսի «Հարության» տոնին:(տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/ crfdp)

- Նկարահանում ավագ սերնդի ներկայացուցիչների մասնակցությամբ «Առավոտ Լույս» հաղորդաշարի շրջանակներում: (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/hprwbk)
- «Նունեի Ցերեկային կենտրոնում» ավագ սերնդի ներկայացուցիչներին մատուցվել են վարսահարդարման ծառայություններ «Ալլա Ղարսեղյան»-ի վարսահարդարման թիմի շնորհիվ: (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/wdjbeu)
- Ավագ սերդի ներկայացուցիչների մասնակցությամբ այց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ. «Ոգեկոչման» երթ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և հարգանքի տուրքի մատուցում «Մեծ Եղեռն»-ի զոհերի հիշատակին: (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/lwdfbp)
- Հաղթանակի օրվան նվիրված միջոցառում: ( տե՛ս հետևյալ հղմամբ https://surl.li/ufyzmb):
- Միջոցառում նվիրված «Համբարձման» տոնին: ( տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/ntxszi):
- Էքսկուրսիա Դենդրոպարկ և Սպիտակի «Սուրբ Հարություն» եկեղեցին: ( տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/ibyfrn):
- Հերթական նկարահանումը «Նունենի» Ցերեկային կենտրոնի ավագ սերնդի ներկայացուցիչների մասնակցությամբ «Առավոտ լույս» հաղորդաշարի շրջանակներում: ( տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/gibsvn)
- Էքսկուրսիա «Ոսկեվազի» գինու գործարան. «Սաղմոսավանք», «Նոր Ջրաղաց» ռեստորանային համալիր Արցախի մեր հայրենակիցների. «Նունենի» ցերեկային կենտրոնի, ինչպես նաև տնային խնամքի ծառայություններ ստացող ավագ սերնդի ներկայացուցիչների մասնակցությամբ:( տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ofcmf)
- Էքսկուրսիա Գյումրու «Մարմաշենի» վանք, «Հեղնար աղբյուր», «Յոթ Վերք» եկեղեցի: «Կոմայրի» ռեստորան: ( տե՛ս հետևյալ հղմամբ՝https://surl.li/yjhvuy)
- էքսկուրսիա ք.Էջմիածին. «Սուրբ Հռիփսիմե» եկեղեցի և Մայր Տաճար «Նունենի» ցերեկային կենտրոնի, և Արցախից տեղահանված շահառուների մասնակցությամբ Արաբկիր վարչական շրջանի և ԱՀ-ի հետ համատեղ կազմակերպման շնորհիվ: (տե՛ս հետևյալ հղմամբ՝https://surli.cc/izljgr):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Նոր Նորք, Ավան, Նուբարաշեն, Քանաքեռ-Զեյթուն եւ Արաբկիր վարչական շրջանների ՄՍԾ խորհրդատվական նիստին ամեն ամսվա մասնակցություն:
- ✓ Առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն (ԱՔՀՀ)
    - o Թեմա «ՖՄԴ հասկացությունը», Ապրիլի 11-12 2025թ: Դասախոս՝ Դոկտոր Ռոքսան Մարիցը: Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
    - o Թեմա  Վերականգնողական ծառայությունների ներկայացում տարեցների համար. ուղղված կարծիքների հավաքագրում SwissMOOC առցանց դասընթացի բովանդակության վերաբերյալ. ինչպես նաեւ վերականգնման եւ առողջ ծերացման հետ կապված հետազոտական հարցերի մշակում: Մայիս 23 - 2025թ: Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպումների շարունակական մասնակցություն՝ Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հրավիրում է հանրային քննարկման՝ ներկայացնելու «Սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության հավաստագրման կարգը, պայմանները, հավաստագրի կասեցման, ինչպես նաև հավաստագրված անձանց ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը բխում է 2024 թվականի նոյեմբերի 14-ին ուժի մեջ մտած «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքի պահանջից: Իրավական ակտի մշակումը և հանրային քննարկումը կազմակերպվել են Հայաստանում Յունիսեֆի գրասենյակի աջակցությամբ՝ Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակում համաժողով Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից
- ✓ Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար համայնքահեն խնամքի և աջակցության ծառայությունների քարտեզագրումը Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից
- ✓ "Կամրջելով բացերը՝ հոգեկան առողջության ծառայություններին համընդհանուր հասանելիության ապահովում" խորագրով «Աշխարհի Բժիշկներ» կազմակերպության հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության համաժողովին Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից
- ✓ «Նունենի» ՀԿ թիմի պատասխանատուն առցանց մասնակցում է «Կաթոլիկ Օգնության ծառայություններ» /CRS/-ի կողմից կազմակերպված «Նախագծերի կառավարում» վերապատրաստման դասընթացին:
- ✓ Ամեն ամիս Արաբկիր և Կենտրոն վարչական  շրջանի տնային սպասարկման սոցիալական աշխատողները մասնակցել են ՄՍԾ խորհրդատվական նիստին:
- ✓ «Նունենի» ՀԿ թիմի պատասխանատուն և սոցիալական աշխատողը մասնակցել են ՄՍԾ Կենտրոն տարածքային կենտրոնի կողմից կազմակերպված համագործակցության ֆորումին:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| Ի/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 80/83 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 69 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 6 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 77 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 61 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենսւրոնի պարագայում) | 83 |
| 5. 1 | Նշել խմբակի անվանումը՝ Կինեզալոգիա | 31 |
| 5. 2 | Նշել խմբակի անվանումը՝ Կրական | 33 |
| 5. 3 | Նշել խմբակի անվանումը՝ Երգի | 30 |
| 5.4 | Նշել խմբակի անվանումը՝ Հոգևոր զրույցներ | 55 |
| 5.5 | Նշել խմբակի անվանումը՝ Հմուտ ձեռքեր | 25 |
| 5.6 | Նշել խմբակի անվանումը՝ Կարի | 6 |
| 5.7 | Նշել խմբակի անվանումը՝ Առողջ ապրելակերպ | 20 |
| 5.8 | Նշել խմբակի անվանումը՝ Աշուղական երգի | 18 |
| 5.9 | Նշել խմբակի անվանումը՝ Ազգային երգ ու պար | 15 |
| 5. 10 | Նշել խմբակի անվանումը՝ Անգլերենի | 14 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 83 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 45 |
| 7. | Այլ ծառայություն Բաղնիքից շարունակաբար օգտվել են<br>Լվացքի կազմակերպում)<br>Բուժքույրական ծառայություններ | 2<br>2<br>73 |

Կազմակերպության ղեկավար <u>Երվանդ Միքայելյան</u> «07»07.2025թ

[illegible]